

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՈՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ

Լեզվի կառուցվածքի ցանկացած մակարդակի համակարգային քննութ-
յունը հիմնվում է գիտականորեն հաստատված որոշակի դրույթների վրա:
Բացառություն չի կազմում նաև հնչյունաբանությունը, որը ճշգրիտ տեր-
մինավորմամբ հնչութաբանություն է կոչվում¹: Առանձին վերցված այս
հարցի քննությունը լեզվագիտությանը հայտնի տեսական դրույթների
լավ կամ վատ վերաշարադրանքը կարող է թվալ: Բայց մեր բուն նպա-
տակն այդ իրողությունը հայերենի բառապաշարի շատ կարևոր և հնա-
գույն շերտի՝ հայոց տեղանունների մեջ տեսնել - վերլուծելն է²: Պարզ-
վում է, սակայն, որ մեր բուն նպատակի իրագործումը հնարավոր է հայա-
գիտության այդ ասպարեզի գիտականորեն հավաստի, նույնիսկ գասագր-
քային դարձած այս տեսական դրույթների որոշակի դասակարգմամբ ու
վերաշարադրանքով միայն: Ուստի, որպես դրա իրագործման ելակետ՝ ար-
ձանագրենք, որ ստորև շարադրվող տեսական ընդհանրացումները ոչ թե
մեր, այլ հայագիտության նոր շրջանի հայագետներինն ու նրանց
հետևորդ լեզվաբաններինն են:

Ըստ լեզվաբանական կանոնարկված դրույթների՝ հնչյունափոխություն-
նը լինում է ա) ընդհանուր կամ պատմական, բ) դիրքային կամ շեշտափո-
խական և գ) փոխազդեցական:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՄ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հնչյունափոխության «ընդհանուր կամ պատմական» անվանված տե-
սակն այդպիսին է դառնում, գիրքային, փոխազդեցական հնչյունափոխա-
կան երկարատև ժամանակաշրջան անցնելուց հետո միայն: Այդ փոփո-
խությունները տարածվում են նույնատիպ բոլոր դիրքերի վրա և հնչյու-
նափոխությունը հասնում է իր համարյա լիակատար ավարտին: Սա իրա-
վունք է տալիս դասագրքերից մեկի հեղինակին սահմանելու՝ «Պատմական
է կոչվում հնչյունափոխության այն տիպը, երբ լեզվի զարգացման պատ-
մության ընթացքում տարբեր պատճառներով որոշ հնչյուններ կամ
հնչյունակապակցություններ փոխում են իրենց որակը, կամ սղվում են:
Հնչյունափոխման նշվող երևույթը կատարվել է հիմնականում լեզվի զար-
դացման նախաաշխարհաբարյան փուլում և ժամանակակից հայերենում

¹ Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները.
Երևան, 1974, էջ 57:

² Տե՛ս Ա. Ա վ ա գ յ ա ն. Զայնավորների հնչյունափոխությունը հայոց տեղանուն-
ներում. - «Պատմա-բանասիրական հանդես», 2002, №3, էջ 187-196:

այլևս չի գործում»³:

Այսուամենայնիվ, միշտ չէ, որ ընդհանրական դառնալու միտումներ ունեցող Հնչյունափոխություններն իրենց լիակատար ավարտին են հասնում: Հնչյունափոխական այլ, հակադիր իրողությունները երբեմն շրջում են զարգացման ընթացքը: Այս հիմնահարցը լայնորեն քննող, գրաբարագետ Վարազ Առաքելյանը, քննելով Հնչյունափոխական գործընթացի երկրորդ կողմը, եկել է այն եզրակացություն, որ մեր հին գրական լեզվի մեջ սլատմական շրջանում առաջացած ընդհանուր Հնչյունափոխական որոշ օրինաչափություններ չեն հասել իրենց ավարտին և այգպես էլ մնացել են անավարտ, իսկ որոշ Հնչյունափոխություններ այնքան կատարյալ են եղել, որ բացառությունները մեկ կամ երկու բառով են ներկայացվել: Գիտնականի կարծիքով, գրաբարում սկսված և ավարտված օրինաչափությունները գրական լեզուն ամբողջովին յուրացրել է, իսկ դրանք, որոնք գրաբարում կիսատ են մնացել, այգպես էլ անավարտ անցել են նոր հայերենին: Դրանց մի մասը դեռևս նույնությամբ օգտագործվում է, իսկ մյուս մասի մեջ Հնչյունափոխական նոր գործընթացներ են նկատվում⁴:

Ընդհանուր կամ սլատմական Հնչյունափոխությունը տարածվում է և՛ ձայնավորների, և՛ բաղաձայնների, և՛ երկբարբառների վրա: Հետևենք այդ գործընթացին:

1. Զայնավորների սլատմական Հնչյունափոխությունը

Բառասկզբում գրաբարի 6 ձայնավորն աստիճանաբար Հնչյունափոխվում է և դառնում յե: Արարատյան շատ խոսվածքներում այս նույն երևույթը արտահայտվում է նաև բառամիջում, օր.՝ որոշակիորեն տարբեր են արտասանվում սէր - սեր, մէր (մայր) - մեր, բէր (մակաղատև) - բեր (բերել): Գրությամբ տարբեր այս տեսակի բառերն արտասանությամբ գրաբարում էլ տարբերվում են, բայց մեր գրական նոր լեզվում արտաբերական այդ տարբերությունն այլևս չի զգացվում:

Ե-ն արարատյան շատ խոսվածքներում բառասկզբում տարբեր փոփոխություններ է կրել: Միևնույն ե-ն բառասկզբում տալիս է յե, է, հէ, ա, ի, հի, հօ, օր. երբ - յեփ, երկու - էրկու, երազ - էրազ, երդում - հօրթում, ևբայր - ափսլեր, երեք - իրեք, ել - հէլի, երեկո - հիլիգուն և այլն:

Ո-ն հայերենում այժմ երկու տեսակ է Հնչում՝ վո և օ: Վո Հնչում է բառասկզբում, իսկ օ՝ մյուս դիրքերում, օր.՝ ոսկի, գործ, հաճո: Հեղվաբանները գտնում են, որ վո դառնալու գործընթացը մեր լեզվում սկսվել է վաղուց: Նույնիսկ V դ. բառասկզբի ո-ն տարբեր է Հնչել: Այդ ասացուցվում է նաև նրանով, որ հունարենի օվկիանոս, օրթոդոքս բառերը V դ. հայերենում տառադարձվել են ո-ով (ովկիանոս, օրթոդոքս): Հայերենում բա-

³ Ա. Մ. Ս ու թ ի ա ս յ ա ն. Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1982, էջ 67:

⁴ Վ. Առաքելյան. Ժամանակակից հայերենի Հնչյունաբանություն. Երևան, 1955, էջ 100:

ուսակզբի ո-ն վ-ի որոշ երանգ է ունեցել: Դա բացատրվում է նրանով, որ վո կապակցութեամբ սկսվող ոչ մի բառ չունենք, ինչպես որ ունենք վարդ, վեճ, վիթ, վուշ բառերում:

Ու ձայնավորը մի այլ ձայնավորից առաջ դարձել է վ, օր.՝ պատուէր - սլատվեր, նուազ - նվազ, կուուել - կուվել, հարուած - հարված:

Գրաբարի երկբարբառները՝ Այ, Ոյ, Աւ, Եւ, Իւ, Եա, Եայ, Եաւ, նոր գրական լեզվի մեջ վերածվել են պարզ ձայնավորների, որը բաղադրիչ ձայնավորների արտաբերութեան տեղերի տարբերութեան վերացման հետևանք է: Մ. Աբեղյանը գտնում է, որ, օրինակ, «ԱՅ երկբարբառը միանգամից արտաբերելու համար պետք է, որ բաղադրիչ Ա և անվանկային Յ(ի) ձայնավորների արտաբերութեան տեղերը մոտենան իրար, որպեսզի, որքան կարելի է, հեշտ լինի Ա-ից անցումը Յ-ի: Դրա համար ԱՅ երկբարբառի երկու հնչյունները փոխադարձաբար ազդելով միմյանց վրա՝ մոտենում են միջին Ե ձայնավորի արտասանութեանը, և այսպիսով «ԱՅ երկբարբառը ժամանակի ընթացքում գառնում է պարզ Ե ձայնավոր (այծ - էծ, սայլ - սել)»⁵: Բացի պարզ ձայնավորների վերածվելուց՝ երկբարբառները վերածվում են նաև իրենց բաղադրիչ ձայնավորներին: Այդ գեպում ոչ թե մի նոր միջին հնչյուն է առաջ գալիս կից ձայնավորների փոխադարձ ազդեցութեամբ, այլ, ըստ Մ. Աբեղյանի, վերացվում է երկբարբառ կազմող ձայնավորներից մեկի արտաբերությունը, օր.՝ Այ երկբարբառը դառնում է Ա կամ Ի, ինչպես՝ այլ - ալ, այծ - ած, այգի - իգի⁶: Մ. Աբեղյանը դտնում է, որ սա նույնպես կից ձայնավորների արտաբերութեան տեղերի տարբերությունը վերացնելու ձգտման հետևանք է:

Աւ երկբարբառը բաղաձայնից առաջ ամենուրեք դարձել է օ, օր.՝ աւձ - օձ, արաւտ - արօտ, կարաւտ - կարօտ: Աւ-ը բաղաձայնից առաջ մնացել է երկու բառի մեջ՝ աղաւնի և նաւթ: Հյուսիսային այս երկույթը բացատրում է նրանով, որ աւ-ից հետո հնչվել է մի ը, այսինքն՝ մի ձայնավոր, իսկ քանի որ ձայնավորից առաջ աւ-ը մնում է նույնութեամբ, ուստի այգ բառերի մեջ փոփոխություն տեղի չի ունեցել: Սակայն իրողությունն այն է, որ աղաւնի բառը մեր կենդանի խոսվածքներում բոլորովին տարբեր է հնչվել, օր.՝ աղունիկ, ևունիկ, ևունէկ, աղունակ, նաև աղօնիկ, լղօնի և այլն, իսկ գրական լեզուն վերցրել է հին ձևը: Ինչ վերաբերում է նաւթ բառին, ապա դա շատ քիչ գործածական բառ է եղել և խոսվածքներում այժմ գործածվածը ոչ թե հին բառն է, այլ նոր փոխառություն է թուրքական լեզուներից: Իսկ այն խոսվածքներում, որտեղ ընդհանուր կանոնը կենդանի է եղել, կանոնավոր կերպով դարձել է նօթ:

Եա երկբարբառը, որ պատմական հնչյունափոխութեամբ այժմ դարձել է յա, նույն հնչյունափոխութեամբ բառավերջի փակ վանկում դարձել է Ե հետևյալ դեպքերում.

ա) Գրաբարի բոլոր անցյալ գերբայներում, եթե աշխարհաբարում գրանք դործածվում են որպես վաղակատար դերբայ, օր.՝ կարդացեալ - կարդացել, սիրեալ - սիրել: Իսկ եթե գրաբարի անցյալ դերբայը գործած-

⁵ Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1931, էջ 114:

⁶ Նույն տեղում, էջ 115:

վում է ոչ իբրև դերբայ, այլ ուրիշ խոսքի մաս, ապա եա -ն չի դառնում ե, այլ մնում է յա, օր.՝ առաքյալ, օրհնյալ:

բ) Այն բոլոր բառերի փակ վանկում, որոնք գործածական են կենդանի խոսվածքներում, օր.՝ ցորեան - ցորեն, կորեակ - կորեկ, լեառն - լեռ:

գ) Եա-ն սովել է ե անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի եաց ձևի մեջ, օր.՝ գրեաց - գրեց, կոչեաց - կոչեց: Մնացած դեպքերում եաց կապակցությունը չի տալիս ե, օր.՝ մենակյաց, երկարակյաց:

դ) Եա > ե Հոգնակի եար, նեար վերջավորությունների մեջ, առանց բացառության, օր.՝ բանեար - բաներ, բարձիկնեար - բարձիկներ: Միայն եա կապակցությունը իրեար ձևի մեջ սովել է յա, օր.՝ իրեար - իրեր - իրար (միմյանց):

ե) Նոր գրական լեզուն զրաբարի եա, ե գուգուհեռ ձևերից վերցրել է ե ձևը, օր.՝ շեմք (չեամ, սեամ), ասեմ (սսեամ):

զ) Եա-ն չի դարձել ե ազգանունների վերջում, եան ձևի մեջ, օր.՝ Մամիկոնյան, Աբրահամյան:

է) Եան ձևի մեջ առհասարակ եա-ն չի դարձել ե, օր.՝ արյան, մեհյան: Միայն եանց ձևը բարբառներում դարձել է ենց և անցել է նաև դրական լեզվին, ինչպես՝ Չարենց, Մեծարենց, ապա՝ Համբարձումենց, Տարենց՝ իրև սեռականի ձևեր:

ը) Այն բոլոր դեպքերում, երբ եա կապակցությունը գրական ճանապարհով անցել է լեզվին, չի դարձել ե, օր.՝ լսարտյաչ, որդյակ, դիյակ:

Փակ վանկում ոյ-ը սլատմական հնչյունափոխությամբ հնչվում է ույ, օր.՝ լոյս - լույս, յոյս - հույս. բարբառներում սլատմական հնչյունափոխությամբ ոյ դարձել է ու, օր.՝ լուս, բուս, պատրուգ:

Եւ-ն մնացել է միայն բառավերջի բաց վանկում, օր.՝ սլարդե, ձև, անձրե, արե, սերե:

Իւ երկրարբառը արարատյան խոսվածքների մեջ փակ վանկում դարձել է ի, ու, օր.՝ ալիւր - ալիւր - ալուր, ձիւն - ձին - ձուն, արիւն - արին - արուն:

Ձայնավորներից առաջ և բառավերջում իւ -ը հնչվում և դրվում է իւ, օր.՝ արծիւ, պասիւ:

Եա եռաբարբառը զրաբարում առաջացել է իաւ. ձևից և բառավերջում երևում է միայն ի -ով վերջացող բառերի գործիական հոլովի մեջ: Այդպիսի գործիականները գրական լեզվում այլևս չեն գործածվում, միայն մնացել են մի քանի քարացած ձևեր, որոնք փոփոխություն են կրել, օր.՝ բարեա - բարե, կարծեաւք - կարծեօք:

2. Բստլաձայնների սլատմական հնչյունափոխությունը

Պատմական կամ ընդհանուր հնչյունափոխություն նկատվում է նաև հայերենի սլարդ և բարդ ձայնեղների մեջ: Հին հայերենի բ, գ, դ, ծ, ջ սլայթականներն ու կիսավայթականները, որոշ դեպքերում սովյալ հնչյունափոխության հետևանքով դարձել են վի, ք, թ, ց, չ խուլ շնչեղներ: Խուլ շնչեղացման ամենաուժեղ միտումը նկատվել է բ ձայնավորից հետո. օր.՝ բուրդ հնչվում է բուրթ, արջ՝ արչ, կարգ՝ կարք, նուրբ՝ նուրփ, դարձ՝ դարց:

Բ, ք, դ, ձ, ջ ձայնեղները մասամբ խլանում են ձայնավորներից հետո: Այս երևույթը նկատվում է արարատյան խոսվածքներում: Գրական լեզուն այդ բառերը ժառանգել է բնական արտասանությունից, որոնք բարդության մեջ վերականգնում են իրենց հին հնչումը, այսինքն՝ արտասանվում են ձայնեղ, օր.՝ աջ հնչում ենք աչ, բայց աջակից, աջակցել բառերը չ-ով հնչելը ոչ թե բնական հնչում է, այլ սխալ արտասանության սլարտադրում: Նույն օրինակափոխության, ածանցավոր բառերը խոսվածքներում գործածվելիս դրանց միջի ձայնեղները խլանում են, իսկ արմատները նոր գործածությունում մեջ դրվելով հնչում են ձայնեղ, օր.՝ իջնել արտասանում ենք իչնել, բայց էջ-ը պահում ենք նույնությունը:

Պատմական հնչյունափոխությունների հետևանք է նաև կոշտ բաղաձայնի ղ դառնալը: Կան մի շարք բառեր, որոնք հնչում են և՛ լ-ով, և՛ ղ-ով, օր.՝ աղի - անաղի, բայց և անալի, ջիղ - ջիլ: մառախուղ - մառախլապատ: Հր. Աճառյանն այս երևույթը բացատրում է նրանով, որ այգսլիսի բառերն ունեին երկու տեսակ հնչում. աղի հնչում էր ալի, այսինքն՝ կոշտ լ -ով և կիսափափուկ լ -ով:

ա) Պատմական հնչյունափոխությունն բառակազմում: Գրական լեզվում դրաբարի յ կիսաձայնը բառասկզբում փոխվել է հ-ի: Ըստ Վ. Առաքելյանի՝ բառասկզբի յ-ն հ-ից տարբեր է հնչվել: Դա ոչ միայն հաստատվում է գրությունում, այլև հնչյունափոխությունում: Հայերենի այն բարբառները, որոնք սլատմական հնչյունափոխությունում հ-ն փոխել են լս-ի, յ-ն հետագայում դարձրել են հ, օր.՝ միևնույն արմատից առաջացած հինգ բառը դառնում է խինգ, բայց յիսուն-ը չի դառնում խիցուն, այլ հիցցուն:

Նրա հավաստմամբ հայերենի մի շարք բարբառներում ձայնավոր հնչյուններից առաջ նկատվում է հ հագաղի ավելացում, օր.՝ ուս - հուս: Այս երևույթը դրական լեզվում իր հետքը թողել է միայն հարբել, հագնել, հորթ, հարոս, հունգ բառերի մեջ, մնացած գեպքերում գրական լեզուն ձայնավորով սկսվող հին բառերի հ-ով արտաբերությունը մերժում է՝ համարելով բարբառային:

բ) Պատմական հնչյունափոխությունն բառամիջում: Բառամիջում մի շարք նոր հնչյունների անկումը կամ առաջացումը սլայմանավորված է բառամիջում գտնված այս կամ այն հնչյունի արտասանական հատկություններով: Լեզվաբանները դժվարանում են հստակորեն բացատրել, թե ինչու դրաբարի մեք-ը դարձավ մենք, կամ գնամք > գնանք, բերեմք > բերենք և այլն: Մենք բառի մեջ ն-ի առաջացումը Գ. Ղափանցյանը կապում է դրափոխության հետ, իբրև թե մ ռնգայինի մտասպատկերի շարունակությունը կազմում է ն-ն⁷: Բայց հայերենում ք-ից առաջ ն-ի հայտնվելը նկատվում է նաև այնպիսի դեպքերում, որտեղ մ գոյություն չունի, օր.՝ գնայաք > գնայինք, բերեաք > բերեինք: Նույնիսկ դրաբարի ներկայի հոգնակի առաջին գեմքի մ-ն դարձել է ն, օր.՝ գրեմք > գրենք: «Ուրեմն՝ որոշ դեպքերում ն-ի առաջացումը, մասնավորապես ք-ից առաջ, մեր լեզվում մի յուրահատուկ տենդենց է եղել: Այդ տենդենցը նկատվում է նաև այլ կապակցությունների մեջ, օր.՝ փոթ - փոնթ, մեծ-ը բարբառներում դառ-

⁷ Գ. Ղափանցյան. Ընդհանուր լեզվաբանություն. հ. I, Երևան 1939, էջ 106:

նում է մենձ, ծ -ն ձայնեղանում է ն-ից հետո, սա էլ դառնում է վենձ»⁸:

Վ. Առաքելյանը գտնում է, որ ինչ-որ օրենքով տ-ից առաջ խ-ն դառնում էր ս, օր.⁹ բախտ - բաստ (բարբաստիկ, չարաբաստիկ), տախտակ - տաստակ, դրախտ - դրաստ, որոնցից պահվել է միայն բաստ ձևը:

բ) Պատմական Հնչյունափոխությունն բառավերջում: Գրաբարում հազվագյուտ քերականական մի քանի ձևեր ու օտար անուններ կան, որ վերջավորվում են ա, ո ձայնավորներով: Ա-ով և ո-ով վերջացող մնացած բառերն ու ձևերն ամփոփվում են յ-ով, օր.¹⁰ ծառոյ, տղայ, երեկոյ, չափածոյ, ծանեայ և այլն: Վ. Առաքելյանը գտնում է, որ այդպիսի վերջավորությունն են ունեցել նաև ի-ով և ու-ով վերջացող բառերը, իսկ եյ-ով վերջացող բառերի եյ -ը գրաբարում դարձել է է, որ հավասար է ե+յ: Ի և ու ձայնավորներից հետո յ-ն ընկել է, իսկ ե-ից հետո ձուլվել: Պահպանվել է ա, ո ձայնավորներից հետո միայն գրություն մեջ: «Ճ դարից հետո բառամիջի այդ յ-ն սկսում է ընկնել, բայց մյուսների համեմատությամբ ա, ո ձայնավորներից հետո դրա ռեալությունը զգացվում է հոգերից առաջ, օր.¹¹ ծառա - ծառայն, տղա - տղայս, երեկո - երեկոյն»⁹: Հոգերից առաջ յ -ն այլևս չի վերականգնվել, որն ընկել է բառավերջում լինելու հետևանքով:

Բառավերջում ընկնում են ոչ միայն բաղաձայնները, օր.¹² Վ դ. տեխ, պատասխանի, կարասի, արծուի, Հյուսիսի բառերը հետագայում դարձել են պատասխան, տե, կարաս, արծիւ, Հյիւսիս, որոնցից որոշ ոճերի ու կազմությունների մեջ ի-ն դեռևս պահում են տե և կարաս բառերը՝ անտեխ, տեխ ունենալ, կահարասի և այլն: Այս բառերի վերջի ի ձայնավորի անհետանալը Գ. Ղափանցյանը բացատրում է գրաբարում երկու ձևերի՝ հիւսիսի և հիւսիս, արծուի և արծիւ (ուղղ. հ.) առկայությամբ¹⁰:

Գրաբարում մի շարք բառեր և բազմաթիվ բայանուններ վերջավորվել են ն-ով և մի նախորդ բաղաձայնով, օր.¹³ ձուկն, սկիզբն, գազաթն, ասեղն, հարսն և այլն, որոնցից ն -ն պահել են միայն Հյուսն, թիկն, ևեռն, դաշն, բուռն, խաշն, տասն, ինն: Ն-ն հիշյալ բառերի մեջ վերականգնվում է բառակազմության և հոգնակիի մեջ, օր.¹⁴ ձուկն - ձկներ - ձկնաբանություն, գուռն - դռներ- դռնապան և այլն:

Բ. ԴԻՐՔԱՅԻՆ ԿԱՄ ԵԵՇՏԱՓՈՒՆԱԿԱՆ ՀԻՉՅՈՒՆԱՓՈՒԹՅՈՒՆ

Հայերենում, ինչպես հայտնի է, բառի մեջ շեշտն ընկնում է վերջին վանկի ձայնավորի վրա, հետևաբար և ուժեղ է համարվում ձայնավորի այդ գիրքը: Անշեշտ մյուս ձայնավորները շեշտակիր այդ ձայնավորի համեմատությամբ թուլ և անկայուն են: Բառի ածման (հոլովման, խոնարհման, հոգնակիի կազմության, ածանցման, բառաբարդման) դեպքերում, երբ շեշտը փոխում է իր տեղը, թուլ դիրքերում գտնվող որոշ ձայնավորներ հնչյունափոխման են ենթարկվում: Հնչյունափոխության այս տիպը կոչվում է նաև ավանդական կամ ժառանգորդական իբրև լեզվի զարգացման նախորդ փուլից, մասնավորապես գրաբարից ավանդված կամ ժա-

⁸ Վ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 135:

⁹ Նույն տեղում, էջ 137:

¹⁰ Գ. Ղափանցյան. նշվ. աշխ., էջ 96:

ուանգված: Հիմնականում հնչյունափոխվում են է(ե), ի, ու, սակավ՝ ա, ո(օ) ձայնավորները:

Գ. ՓՈՒԱԶԴԵՑԱԿԱՆ ՀՆՁՅՈՒՆԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Փոխադրեցական հնչյունափոխություն են կոչվում այն հնչյունական փոփոխությունները, որոնք առաջ են գալիս բառակազմի կամ ամբողջ հնչյունական շղթայի մեջ գտնվող հնչյունների փոխադարձ ազդեցություններով:

Հնչյունափոխության այս տիպին են պատկանում դրափոխությունը, առնմանումը, տարնմանումը, հնչյունի հավելումը, հնչյունի կորուստը, ամփոփումը և համաբանական հնչյունափոխությունը:

1. Դրափոխություն: Բանավոր խոսքի մեջ շատ է տարածված հնչյունների ետևառաջությունը, այսինքն՝ բառի առաջին հնչյունները դնում են դեպի հետ, իսկ հետևի հնչյունները բռնում են առաջինների տեղը, կամ ուղղակի ընկնում են դրանցից առաջ: Շատերը սա բացատրում են հոգեբանական այն երևույթով, որ բառի ամբողջական մտապատկերացման մեջ երբեմն վերջին հնչյունները ավելի շուտ են պատկերացվում, քան հարկավոր է և հենց այդ պատճառով ընկնում են մտապատկերումից վրիպած հնչյուններից առաջ¹¹:

Ըստ Աբեղյանի, այս փոփոխությունը կատարվում է առանց հաստատուն օրենքի՝ պատահաբար. «Բառի մեջ իրարու կից կամ միմյանցից հեռու դնված հնչյունները մի տեսակ հանկարծական ուսույունով մեկմեկու հետ փոխում են իրենց տեղը, կամ մի հնչյուն հաջորդ վանկից տեղափոխվում է նախորդ վանկի մեջ»¹²: Այս փոփոխության ամենից շատ ենթարկվում են ձայնորդ հնչյունները, օր.՝ դատարկ - դարդակ, ականջ - անկաջ, կամուրջ - կարմունջ, հին խստոր, կապերտ դարձել են սխտոր, կարպետ, հին տարգալ-ը դարձել է տրգալ, տգալ, դգալ և ապա՝ գդալ:

Ըստ Վ. Առաքելյանի, երբեմն հնչյունը գալիս է առաջ՝ մնալով նաև իր տեղում, օր.՝ մեքենա - մենքենա, ադամանդ - անդամանդ: Այս երևույթը նա անվանել է անտիցիպացիա, որը նկատելի է նաև Հր. Աճառյանը, երբ բառի մեջ հետո հնչվելիք մի հնչյուն նախապես էլ է հնչվում, օր.՝ գոքանչ գոնքանչ (նախասություն)¹³: Դրափոխության մի այլ տեսակն է նախասությունը, երբ հնչյունն առաջ է դալիս՝ մնալով նաև իր տեղում. «Մտապատկերը վաղ է առաջանում, բայց իր տեղում կրկին զարթնում է»¹⁴:

Նախասության հակառակ երևույթը հարասությունն է, երբ մի հնչյուն քիչ հետո նորից է կրկնվում: Սրա պատճառն այն է, որ, «բառի մեջ մի ձայնի արտաբերության համար դործարանն իր ձևն ստանալուց հետո, նույն դրույթունը շարունակում է ավելի երկար, որով նույն ձայնը

¹¹ Վ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 141:

¹² Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 83:

¹³ Հր. Աճառյան. Լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. VI. Երևան, 1971, էջ 716:

¹⁴ Գ. Բ. Զահակյան, է. Բ. Աղայան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան. Հայոց լեզու. I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 153:

կրկնվում է նաև հետո»¹⁵: Այս նույն երևույթն անվանվում է նաև կրկնություն, երբ մի հնչյուն իր տեղում հնչվելուց հետո հնչվում է մի անդամ ևս, այսինքն՝ ոչ թե առաջ է դալիս, այլ մտապատկերը շարունակվում է և ըստ այդ մտապատկերի հնչվում է նաև հետո: Հայերենում հարասություն օրինակներ են՝ կանաչ - կանանչ, ճանաչ - ճանանչ, մեք - մենք, մաչ - մանչ, միրուք - միրունք և այլն:

2. Առնմանություն (ասիմիլյացիա): Առնմանությունը հնչյունափոխական այն երևույթն է, երբ բառի մեջ երկու տարբեր հնչյուններից մեկն ազդելով մյուսի վրա այն նույնացնում կամ նմանեցնում է իրեն: Այն լինում է՝ լիակատար և թերի, առաջընթաց և հետընթաց:

Բոկիկ > բոբիկ բառում կատարվել է լիակատար առաջընթաց առնմանում, երկչրթնային ձայնեղ սլայթական բ-ն ազդելով իրենից առաջ գտնվող ետնալեզվային խուլ սլայթական կ-ի վրա՝ ամբողջապես նմանեցրել է իրեն:

Զքուլել > քսուլել բառում կատարվել է թերի, հետընթաց առնմանում. առաջնալեզվային ձայնեղ շփական գ-ի վրա ազդելով՝ հետնալեզվային շնչեղ խուլ սլայթական ք-ն խլացրել է, դարձնելով առաջնալեզվային խուլ շփական ս: Թերի է առնմանումը, որովհետև զ հնչյունի միայն մեկ՝ ձայնեղություն հատկանիշն է փոխվել:

3. Տարնմանություն (դիսիմիլյացիա): Ասա առնմանությունը միանգամայն հակադիր երևույթ է, երբ բառի մեջ նույն կամ նման հնչյուններից մեկն ազդում է մյուսի վրա և լրիվ կամ մասնակիորեն տարբերում իրենից: Տարնմանումը նույնպես կարող է լինել լիակատար և թերի, առաջընթաց և հետընթաց: Այսպես, նույն բոկիկ բառում միաժամանակ առկա է տարնմանման երևույթը: Բառավերջի հետնալեզվային խուլ սլայթական կ հնչյունն ազդելով բառամիջի կ-ի վրա, փոխել է այն՝ դարձնելով բ (բոբիկ) շրթնային ձայնեղ սլայթական:

4. Հնչյունի հավելում: Հնչյունի հավելում է կոչվում հնչյունափոխություն այն երևույթը, երբ բառի մեջ ավելանում է մի նոր հնչյուն: Այսպես, ոգի բառարմատին ավելանալով մեկական հնչյուն՝ առաջացել են նոր բառեր՝ ոգի - շողի - հոգի:

Հ հնչյունի հավելումով՝ ապա - հապա, արբել - հարբել, գրաբար՝ ագանել - հագանել, որթ - հորթ, աճար - հաճար, անդ - հանգ, բարբառներում՝ արոր - հարոր, ամբար - համբար:

Ն հնչյունի հավելումով՝ մեք - մենք, կառաչ - կառանչ, երնջակ - երնջանակ, բարբառներում՝ արտասուք - արտասունք, կամաց - կամանց:

Հնչյունի հավելում է կատարվել նաև կրկնավոր մի շարք բարդություններում՝ աման - չաման, ոլոր - մոլոր, ավել - մավել, արքատ - մարքատ, ամբար - չամբար և այլն: Այսպիսով, հավելումն ըստ դիրքի կարող է լինել՝ բառասկզբում, բառամիջում, բառավերջում:

5. Հնչյունի կորուստ: Հնչյունի կորուստ է կոչվում հնչյունափոխության այն երևույթը, երբ բառի մեջ ընկնում (սղվում) է որևէ հնչյուն, օր.՝ համբառնալ - ամբառնալ, խարչել - խաչել, քարչել - քաչել, հարգո - արգո,

¹⁵ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 716:

սլահս - սլաս, խորհել - խոհ, Հակոբ - Ակոբ և այլն: Հնչյունի կորուստ է տեղի ունեցել:

ա) Կրկնավոր բարդութուններում՝ այլուն - վայլուն (վայլուն - վայլուն), առոք - փառոք, ակաս - պակաս, ավալ - թավալ:

բ) Արմատի կրկնությամբ կոչված կցական բարդութուններում՝ հոպոպ (հոսլհոսլ), հեկեկալ, հոտոտեկ, հագագ և այլն:

գ) Արտասանության ժամանակ հ -ի անկում է նկատվում մի շարք բառերում՝ աշխարհ(հ), արհամարի(հ)ել, հաշվասլահ(հ), հերթասլահ(հ), նախագահ(հ) և այլն:

դ) Հնչյունի կորուստ է կատարվել սլատմական հնչյունափոխությամբ գրաբարյան ի, յ, ն, հնչյունների անկման դեպքում՝ տեղի - տեղ, ծառայ - ծառա, գառն - գառ և այլն:

ե) Պատճառական բայերում՝ զարմացուցանել - զարմացնել, աշխատեցուցանել - աշխատեցնել:

զ) Բայերի խոնարհման ժամանակաձևերի մեջ՝ չեմ կարգալ, չես կարգալ, չի կարգալ, չեմ գրիլ, չես գրիլ, չի գրիլ ձևերի վերջի լ հնչյունը դուրս է ընկել՝ չեմ կարգա, չես կարգա, չի կարգա, չեմ գրի, չես գրի, չի գրի և այլն:

6. Հնչյունների ամփոփում (հասլոլոլիա): Ամփոփումը հնչյունափոխության այն երևույթն է, երբ բառի կաղմում եղած իրար հաջորդող նույն հնչյունափոխութուններից կամ վանկերից մեկը կրճատվում է, օր: հասարակարգ - հասարակարգ, երասանակակալ - երասանակալ, աշխարհահասարակարգ - աշխարհայացք:

Կատարվում է նաև ոչ միայն առանձին վանկերի, այլև ամբողջական բառի առանձին մասերի կրճատում՝ հատկապես հատուկ անուններում: Կրճատման եղանակով բառի հնչյունափոխման այս երևույթը Ա. Սուքիասյանն անվանում է «արտակարգ» հնչյունափոխություն, օր՝ Կարապետ - Կարո, Հայրապետ - Հայրո, Աստվածատուր - Ասատուր և այլն¹⁶:

7. Ընդլայնում: Երբ բառը զանազան սղումներով ու կրճատումներով այնքան է կարճանում, որ այլևս իր ինքնությունը կորցնում ու աննշան մի տարր է դառնում, դուցե և ուրիշ համանուն բառերի կամ ձևերի հետ չփոթվում, լեզուն դիմում է այժմ էլ հակառակ միջոցի՝ երկարեցնում է բառը այս ու այն մասնիկի կամ վերջավորության միջոցով: Այս երևույթը կոչվում է ընդլայնում: Հայերենում ընդլայնման լավագույն օրինակ է բոկ-բոբիկ բառը: Հը. Աճառյանը գտնում է, որ սրա նախաձևն է հնդեվրոպական նախալեզվի *bhosō*, որ պիտի տար հայերեն բո, բայց այս բառն այնքան կարճ և անզոր է, որ հեշտությամբ կարող էր չփոթվել թեկուզ բո ձայնարկության հետ: Դրա համար ավելացրին կ մասնիկը, որն անշուշտ -իկ փաղաքշական մասնիկն է: Ժամանակի ընթացքում այս ձեղն թույլ համարվեց, և նորից ավելացնելով նույն -իկ մասնիկը, որի առաջին հավելումը բոլորովին մոռացված և աննկատելի էր, դարձավ բոկիկ:

8. Համաբանական հնչյունափոխություն: Համաբանական փոփոխությունները, որպես օրենք, կատարվում են ուրիշ բառերի կամ նույն բառերի ուրիշ ձևերի ազդեցությամբ: Համաբանական հնչյունափոխության ժամա-

¹⁶ Ա. Սուքիասյան. նշվ. աշխ., էջ 64:

նակ իմաստաբանորեն կամ ձևաբանորեն նման կամ նույն իրողություններ արտահայտող բառի (կամ բառաձևի) ազդեցությունը տվյալ բառը (կամ բառաձևը) լրացնում է իր հնչյունական կազմը մի նոր հնչյունով կամ հնչյուններով: Այսպես՝ դրաբարում ունենք բարձր և ցած բառերը, որոնք, իբրև հատկանիշներ, որոշ փոխադարձ կապի մեջ են իրար հետ: Ժամանակի ընթացքում բարձր բառի ազդեցությամբ ընդհատակից նաև ցած բառը և դարձել ցածր: Զգուշ բառի համաբանությամբ քնքուշ բառը արտասանվում է քնքուշ, սեպտեմբեր բառը հոկտեմբեր և գեկտեմբեր բառերի ազդեցությամբ ժողովրդական խոսակցական լեզվում դարձել է սեկտեմբեր: Ըստ էջ. Աղայանի՝ այն սլահին, երբ հնչյունական փոփոխությունն ընդհանրանում է, ունենում ենք ոչ թե առանձնակի, փոխազդեցական հնչյունափոխություն, այլև ընդհանուր պատմական հնչյունափոխություն¹⁷: Հանդես դալով նախ իբրև հնչյունափոխության մասնավոր, առանձնակի երևույթ՝ որոշ ժամանակ այն դեռևս աննկատելիորեն տարածվում է, ստեղծելով նոր բառեր և պատմական միայն որոշ շրջանում հանդես դալիս արդեն իբրև ընդհանրացած երևույթ: Այս սլատճառով էլ ընդհանուր հնչյունափոխությունը լեզվաբանության մեջ կոչում են նաև պատմական հնչյունափոխություն: Ընդհանուր պատմական հնչյունափոխության լավագույն օրինակ են հանդիսանում, այսպես կոչված, բաղաձայնների տեղաշարժերը (Lauterschiebung), որոնցով հարուստ է հայերենը: Այդ տեղաշարժերի էությունն այն է, որ երբեմն ձայնեղ հպականները ժամանակի ընթացքում վերածվել են խուլերի, կամ շնչեղացել, որի հետևանքով էլ փոխվել է լեզվի ամբողջ հպական-բաղաձայնական համակարգը: Հպականների տեղաշարժը հայ բարբառներում բաժանվում է երեք կարգի.

1) Ձայնեղ հպականներն ու հպականները վերածվել են խուլերի, ինչպես՝ բերան > պերան, ձուլ > ծուլ, ջուր > ճուր և այլն: Այդպես է Ղարաբաղի, Հադրուկի, Խոյի, Վանի և այլ բարբառներում:

2) Խուլերը ձայնեղացել են, իսկ ձայնեղները՝ շնչեղացել, ինչպես՝ պապ > բաբ, ծուխ > ձուխ, տատ > գագ, կերակուր > գերագուր, բերան > բերան (bheran) և այլն: Այդպես է Համշենի, Ակնի, Արաբկիրի և այլ բարբառներում:

3) Ձայնեղները խլացել են, խուլերը ձայնեղացել, ինչպես՝ բերան > պերան, ջուր > ճուր, բայց՝ պապ > բաբ. ծուխ > ձուխ և այլն: Այդպես է Կիլիկիայի բարբառի Մարաշի ենթաբարբառում և Զեյթունի Շորվայան թաղի խոսվածքում:

9. Ժողովրդական ստուգաբանություն (Ֆոլկսէտիմոլոգիա): Հաճախ լեզվում բառարմատները առանձին կամ բարդության մեջ ենթարկվում են իմաստային խամրումի, այսինքն՝ բառը դործածվում է, բայց դրա իսկական նշանակությունն այլևս չի իմացվում: Այսպես՝ Արագած անունը, որ աղբբեջաններում դարձել է նախ Արագազ (ծ չլինելու պատճառով), ապա՝ իմաստավորում ստանալով՝ դարձել է Ալագյազ «խայտակն»:

Գրաբարի լուցանել բայի լոյց արմատը ժողովուրդն այլևս չի հասկա-

¹⁷ է դ. Ա ղ ա յ ա ն. Լեզվաբանության հիմունքներ. Երևան, 1987, էջ 275:

նում և ճրագալոյց հին բառը դարձրել է ճրագալույս՝ ւոյց (լույց) արմատը ստուգաբանելով ւույս-ով: Կասում (կասել) նշանակում է «կամներ, օրանը ծեծել»: Այդ արմատը չհասկանալով ժողովուրդը կասել է կալ բառի հետ և բայը դարձրել կալսել: Ժողովրդական ստուգաբանությունների մեջ լայն տեղ են գրավում տեղանունները: Թուրքերը, գրավելով Հայաստանը և Հայերեն տեղանունները հարմարեցնելով իրենց լեզվի բառերին, կաղմել են՝

Օձուն=Ուզունլար «երկարներ».

Արագած=Ալագէօզ «խաժ աչքերով».

Սուրմալու. հին անունն է Սուրբ Մարի, կրճատված՝ Սուրմարի, տարմանությունը երկու ր-երից մեկը դառնում է լ՝ Սուրմալի կամ Սուրմալու «աչքին ծարիր քսած»¹⁸:

10. Գիտական ստուգաբանություն: Այս երևույթը հատուկ է ավելի եվրոպական լեզուներին և հատկապես նրանց, որոնց ուղղադրությունը ոչ թե հնչական, այլ ստուգաբանական է: Գիտնականները, ստուգաբանելով ժողովրդական բառը և կցելով այն որևէ հին ձևի, ավելացնում են դրույթյան մեջ մի տառ, որ գտնում են նախաձևի մեջ: Այնուհետև այս ձայնը գրությունից անցնում է լեզվին: Հայերեն այս կարգի բառերից է մահտեսի-ն, որի ժողովրդական, արաբերենից անցած ձևն է մուղգսի: Գիտնականները սխալ ստուգաբանելով, կարծել են, թե մահ և տեսի բառերից է, դարձրել են մահտեսի, որ հետո անցել է լեզվին ու ժողովրդին:

Աճառյանը նշում է, որ գրամարտիկոս և երգեհոն բառերը ծագում են հունարենից: Գրամարտիկոս բառում առաջին մասը կասելով մեր գիր բառի հետ՝ հին մատենագրության մեջ գարձրել են գրամարտիկոս, գրամարտիկ, իբրև թե «գրքերի հետ մարտնչող»¹⁹: Իսկ երգեհոն բառը ծագում է հունարեն «նվաղարան» բառից, որ նշանակում է գործիք: Ըստ Աճառյանի՝ նույն բառի հարադատ տառադարձությունն էր օրգանոն, որ հետո երգ բառից կարծվելով դարձել է երգեհոն, երգիոն²⁰:

11. Բաղարկություն (կոնտամինացիա): Երկու տարբեր, բայց իմաստային մոտիկություն ունեցող բառերի բաղարկության հետևանքով (կոնտամինացիա) բառերն իրենց հնչյունական կերպարանքը փոխում են: Վ. Առաքելյանը գրում է, որ լար և պարան բառերի բաղարկությունից ստացվել է լարան բառը, հեսան և լես (մանրել, հղկել) արմատները խառնվելով առաջ են բերել լեսան: Երևանի խոսվածքում ունենք կլճեսլ, որ առաջացել է կլեպ, կճեսլ ձևերից²¹:

12. Ձայնդարձ եվ հերթագայություն: Ձայնդարձը ձայնավոր հնչյունի այն փոփոխությունն է, որով ստեղծվում են երկու տարբեր արմատներ, որոնք ժամանակին կարող են այնքան հեռանալ իրարից, որ այլևս չզգացվի դրանց միևնույն արմատից ձայնադարձի միջոցով ստացված լինելը: Հնում ձայնադարձը կարևոր ձևաբանական միջոց է եղել Հայերենում նոր բառեր ու քերականական ձևեր կաղմելու համար, սակայն այժմ միայն այդ հին օ-

¹⁸ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 732:

¹⁹ Նույն տեղում, էջ 734:

²⁰ Նույն տեղում, էջ 735:

²¹ Վ. Ա ա ք ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 156:

րենքի առաջ բերած որոշ հետքերն են մնացել լեզվում, որ այստեղ արձանագրվում են իբրև պատմական երևույթ: Ձայնադարձի արդյունքն են համարվում՝ քոր - քեր, չոր - չիր, գոլ - գաղջ, դև - դավար - դաղձ, գիրկ - գուրկ, բահ - բիհր - բիր, որոշ - ուրիշ, նշող - նշույլ, դաղ - գող և այլն: Ձայնադարձի միջոցով այստեղ գոյացել են նոր բառեր ու արմատներ, բայց ձայնադարձով հնում ստեղծվել են և հոլովածներ, օր.՝ շուն - շան, սուն - սան, գիւղ - գեղ, քոյր - քեռ և այլն: Այս նույն երևույթը տեղի է ունենում նաև բաղաձայնների մեջ, որ կոչվում է հերթագայություն: Հայերենում հերթագայության օրինակներ են՝ փշուր - փսոր, տուգանք - տուժել, առույգ - ուժ, սեսլ - շեպ, աղծ - աղտ, պիղծ - սլլտոր, արժել - հարգել, արև - արեգ և այլն:

13. Հնչյունների պարզեցում և բարդացում: Հնչյունափոխության մեջ նկատվում է պարզեցման և բարդացման երևույթը: Հայերենում առաջնալեզվային պայթականները միանում են առաջնալեզվային շփականների հետ և կազմում բարդ հնչյուններ: Այս հարցի պարզաբանումը դժվարանում է նրանով, որ հաճախ հեշտ չի լինում որոշել հինը պարզ ձևն է, թե բարդը: Օրինակ՝ լեզվաբանները կարծում են, թե տատանել արմատի մեջ տ պարզ պայթականը բարդացել է ս-ով և տվել ծածանել բառը, իսկ ոմանք էլ սրան հակառակ ասում են, որ ծածանել բայի ծ բարդ հնչյունները պարզեցվել և տվել են մի կողմից տատանել, մյուս կողմից՝ սասանել, ու այդպիսով լեզվի մեջ առաջ են եկել երեք համագոյակից ձևեր: Գ. Ղափանցյանը գրում է, որ շեշտի հետևանքով սեսլուհ + ական դառնում է սեսլահական, ը ձայնավորի անկման շնորհիվ ևս, որ տեղի է ունենում շուտ արտասանության և դիրքի սլատճառով, իսկ հնչյունահամագրությունը տեղի է տալիս հնչյունամիացման, իբրև նոր բարդ հնչյուն՝ փ²²: Բայց կարող է լինել և ընդհակառակը, այսինքն՝ բարդը տեղի է տալիս պարզեցման, ինչպես վաթսուն բառի մեջ, ուր թ բաղաձայնը հարևան ս հնչյունի ազդեցությամբ իր բարդ ց (վաց < վեց) վիճակից վեր է ածվել ավելի պարզի:

ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Իբրև ամփոփում վերոբերյալ բոլոր հնչյունափոխությունների՝ կարող ենք ասել, թե հնչյունական մասնավոր փոփոխությունները հաճախ լեզվի մեջ ընդհանրանում և դառնում են ընդհանուր օրենք՝ տվյալ լեզվի որևէ ժամանակաշրջանի համար:

Հնչյունական օրենքը մի այնպիսի օրինաչափություն է, որ սկսում է մի մասնավոր հնչյունախմբի մեջ և վերոհիշյալ հակադիր սլայմանների բացակայությամբ տարածվում այդ մասնավոր հնչյունախմբին նմանվող բոլոր մյուս հնչյունախմբերում: Անհրաժեշտ է նշել, որ հաճախ նման խմբերում փոփոխությունը կարող է սկսվել միաժամանակ, այնպես որ դժվար է ցույց տալ, թե որ կոնկրետ խմբում սկսվեց այդ օրինաչափությունը:

Այսպիսով, հնչյունական օրենքը՝ համապարփակ երևույթ է, բացի վե-

²² Գ. Ղափանցյան. նշվ. աշխ., էջ 115:

ըոհիշյալ սլայմաններից, հնչյունական օրենքը ենթակա է ժամանակի և տեղի գործոններին: Ինչպես նշեցինք, պատահում է, որ հնչյունական տվյալ օրենքը որոշ ժամանակում և որոշ տեղում կանգ է առնում և սկսում է զարգանալ դրան հակադիր մի այլ հնչյունական օրենք: Օրինակ՝ հայտնի է, որ գրաբարի աւ հնչյունակապակցութունը բաղաձայնից առաջ փոխվեց *վ*-ի, բայց թե կոնկրետ ո՞ր բառի մեջ սկսվեց հիշյալ փոփոխութունը, ըստ հնչույթաբանների՝ դժվար է ասել: Հնչյունական օրենքի ձևավորման համար դա երկրորդական է: Հիմնականն այն է, որ այդ փոփոխութունը կատարվել է հայերենի բոլոր բառերի մեջ, բացառությամբ աղավնի և նավթ բառերի:

КРАТКИЙ ОБЗОР ЧЕРЕДОВАНИЯ ЗВУКОВ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АНУՍԻ ԱՎԱԳՅԱՆ

Р е з ю м е

Динамические трансформации в сфере наиболее "внешнего" из структурных уровней языка, в сфере фонологии устной и письменной речи, наиболее интенсивно проявляются в области чередования звуков. Чтобы оградить литературный язык от воздействия диалектной устной речи и уберечь его от иноязычного влияния, а также в целях сохранения процесса языкового развития в пределах закономерностей, ставших традиционными, весьма важна классификация явлений, связанных с чередованием звуков, их систематизация и последовательная реализация. Приведенные в настоящей статье классификации чередований заимствованы из широко известных в арменистике теоретических исследований и представлены в соответствии с принятой в науке систематизацией. Вместе с тем эти классификации сопровождаются комментариями автора об исследованиях в области теоретической и практической фонетики и о возможностях их использования в практических целях.